Բարև՛, իմ ծանո՛թ և անծանո՛թ բարեկամ,

Ես Մարիանան եմ: Գրում եմ քեզ մի երկրից, որտեղ դու չես եղել, բայց մեծ հույս ունեմ, որ իմ այս նամակը կարդալիս կցանկանաս տեսնել ինձ ու իմ երկիրը, քանի որ ես ցանկանում եմ տեսնել քեզ և իմանալ, թե ինչպիսին է ինձ այդքան ծանոթ և անծանոթ բարեկամը:

Իմ այս նամակը, որն ուղղված է քեզ, հնարավորություն է տալիս կոտրել այն կարծրատիպը, թե երբեք հնարավոր չէ կապ հաստատել քո պետության քաղաքացու հետ, առավել ևս՝ խոսել խաղաղության մասին, որը մեր ժամանակների գերագույն խնդիրն է:

Գիտե՞ս, խաղաղությունն այն է, որ դեռ փոքր երեխան չգիտակցված, բայց իր երազանքների մեջ անպայման տեղ ունի դրա համար, և խաղաղություն է ցանկանում ողջ աշխարհին՝ չիմանալով, որ կան թշնամանալ, ատել հասկացությունները, քանզի դա խորթ է նրա մանկական, պարզ մտքին:

Արի՛ մենք, տես, չեմ ասում ես և դու, այլ մենք կերտենք մեր ապագան, մի կողմ թողնենք ատել և թշնամի բառերը և օգտագործենք բարեկամը, ընկերը, հարազատը:

Ես ունեմ իմ մտքերն ու կարծիքները խաղաղության վերաբերյալ, օրինակ՝ խաղաղությունն ինձ համար սահմանում չունի, որ սահմանենք և առաջ անցնենք: Այս հարցի շուրջ մտորելիս հասկացա, որ խաղաղությունը շատ տարբեր կերպ կարելի է ընկալել, և կարևորն այն է, որ բոլոր տեսակի խաղաղությունները փոխկապակցված են: Եթե երկիրդ խաղաղ է, խաղաղ ես դու, խաղաղ է հոգիդ և երկինքը:

Լավ է չէ՞, երբ ներսդ խաղաղ է, իսկ ինչքա՜ն լավ է, որ խաղաղ է երկիրդ: Ինձ համար խաղաղության գույներն էլ են տարբեր լինում, օրինակ՝ պատերազմն ունի իրեն բնորոշ գորշ գույները՝ մթություն, փոշու ամպ, արյուն, իսկ խաղաղություն ասելիս հասկանում եմ ճերմակ, կապույտ երկինք, պայծառ արև, ժպիտ: Հուսով եմ՝ կհամաձայնես ինձ հետ:

Գիտե՞ս, ինձ միշտ հետաքրքրել է՝ թե դու, քո ընկերները, հարազատները ինչպես եք մտածում և ինչ ճանապարհ եք տեսնում խաղաղության հասնելու համար: Ես առիթ չեմ ունեցել այցելել ձեր երկիրը, խոսել այդտեղի բնակիչների հետ, լսել նրանց կարծիքները: Բայց վստահ եմ՝ առողջ մտքի տեր մարդը, հասարակության անդամը, պետության քաղաքացին ցանկանում է իր երկիրը տեսնել խաղաղ և տեսնել երկու ժողովուրդ, որ ապրում են մեկ երկնքի տակ և հենց այդ մեկ երկնքով էլ համերաշխ լինել երկրի վրա:

Հիմա քեզ կպատմեմ մի պատմություն, որտեղ մեր ժողովուրդները հաշտ են եղել, և որ հաշտ լինելը մեր ներսում թաքնված է, ուղղակի հիմա շատ բայցեր կան մեր միջև, որ պիտի ջնջենք:

Տատիկս իր ծնողների հետ ապրել է Ադրբեջանի Շամխորի շրջանում 20 տարի, այնուհետև ամուսնացել է և եկել Հայաստան: Իսկ ծնողները 1992 թ. շարժման ժամանակ տեղափոխվել են: Տատիկս պատմում է, որ այդ տարածքում ապրել են նաև իր պապու պապերը, և չեն կասկածել, թե այդ տարածքը կարող են լքել: Մեր ժողովուրդներն այնքան հաշտ են ապրել, որ գիշերները տան դուռը չէին փակում, քանի որ վստահություն կար նրանց միջև: Տատիկիս հայրիկի ընկերների մեծ մասը

ադրբեջանցիներ են եղել և մի ընկերը, որի անունը Մահար էր, այնքան հարազատ էր դարձել, որ նրան անվանում էին Մահար դայի:

Գիտե՞ս, տատիկիս ցանկությունն է, որ տեսնի իր հայրական տունը այսքան տարի անց, իսկ եթե չհասցնի, ապա դա պատգամել է իր թոռնիկներին:

Մտածում եմ, հանգամանքները ուժեղ գտնվեցին և բորբոքեցին թշնամական խարույկը, որը թեժացնում է պատերազմ տանող ուղիները, բայց հիմա հերթը մերն է՝ ինձ նմանների և քեզ նմանների հերթը. մենք այդ հանգամանքներից ավելի ուժեղ պետք է լինենք: Պատկերացրու՝ որքան հրաշալի կլինի, որ այցելես մեր երկիր, ես քեզ ցույց կտամ քո փնտրած տարածքը, իսկ դու՝ իմ տատիկի բնակավայրը: Եվ միասին կհիշենք մեր այս նամակները, ու կասենք՝ ինչքան բան է փոխվել: Եվ մեր նամակները կարդալիս մի կուշտ կծիծաղենք, թեկուզ դա լինի այս պահից մի տասը կամ քսան տարի հետո: Եվ մենք մեր խաղաղասիրական ոգով կողողենք մարդկանց, նրանց հոգու, ցավի մութ անկյունները կլուսավորենք մեր լավատեսությամբ, առողջ դատողություններով և կլինենք լավագույն օրինակը:

Նաև ասեմ, որ սովորում եմ Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետում և իմ մասնագիտությունից ելնելով ասեմ, որ հայերենում խաղաղություն բառը պարզ ածանցավոր է, բայց իր մեջ ամփոփում է վեհ գաղափարներ, մարդուն հասցնում կատարելության, կատարսիսի՝ մաքրագործման:

Ես չգիտեմ իմ նամակը կարդալիս՝ ինչ կզգաս, բայց հուսով եմ կարտահայտես դրանք ի պատասխան: Կներես, որ այսքան երկար գրեցի, ուղղակի չկարողացա կարճ գրել: Իմ նամակը փոքրիկ կոչ է, որ գալիս է մարդասիրությունից դրդված:

Սիրով՝

Մարիանա

Հ.Գ. Փոքր են քայլերս, բայց հստակ…